— Ես դրան ձեզ համար աշակերտ եմ բերել, — պատասխանեց Ասլանը ծիծաղելով. — կը մնայ ձեզ մօտ, կխնամէ ձեր հիւանդութիւնը, կծառայէ ձեզ, եւ ձեզանից բան կսովորէ:

Նա նոյնպէս ծիծաղեց:

— Ըստ վանական հին սովորութեան, — ասաց նա, — ինչպէս մեր հայր սուրբերը սպասաւոր-աշակերտներ էին պահում: Մի գիժը ունեմ արդէն: Բայց ես կարօտ եմ ընկերի, մի լաւ ընկերի. միայնակութիւնը սպանում է ինձ: Այստեղ մարդ անգամ չեմ գտնում, որի հետ կարելի լինէր խօսել: Առաջ ինձ «Համր» էին կոչում: Բայց իմ լեզուն այժմ բացոել է. ուզում եմ խօսել, շատ խօսել, գուցէ այն պատճառով, որ շուտով կը դադարեմ խօսելուց...

— Եւ ձեր նոր աշակերտը կօգտոի ձեր շատ խօսելուց, — նկատեց Ասլանը հանաքի ձեւով:

Նա ոչինչ չպատասխանեց, խնդրեց տեղ տալ իրեն՝ պառկելու մահճակալի վրայ: Մենք վեր կացանք: Ասլանը առաջոայ կարգով ուղղեց նրա անկողինը եւ կամենում էր, նրա ձեռքից բռնելով, պառկեցնել մահճակալի վրայ: Բայց նա մերժեց, ասելով.

— Դեռ ուժ կայ, դեռ այնքան չեմ թուլացել...

Նա թիկն տոեց բարձերին, երեսը դէպի մեզ, հարցնելով ինձանից.

— Ինչպէ՞ս է քո անունը:

— Ֆարհատ, — պատասխանեցի ես կարմրելով:

— Դէ, Ֆարհատ, այժմեանից սկսիր քո ծառայութիւնը, գնա՛յ այդ խուցին կից սենեակը, այնտեղ իմ սպասաւորին քնած կը գտնես, կողքը պինդ բզիր, նա վեր կը կենայ, ասա, որ մեզ համար մի լաւ սուրճ պատրաստէ: Սուրճը ինքդ բեր եւ շնորհքդ ցոյց տո՛ւր մեզ:

Ես հասկացայ, որ սուրճը մի առիթ էր հեռացնելու ինձ, իսկոյն դուրս եկայ, մտայ սպասաւորի սենեակը:

Սպասաւորի սենեակը համեմատաբար աւելի զարդարած էր, քան թէ իր տիրոջ խուցը: Ես նրան գտայ նոյն դրութեան մէջ, որպէս ասաց Համրը: Քնած էր փայտեայ մահճակալի վրայ եւ ամբողջ սենեակը դղրդում էր նրա ծանր շնչառութիւնից: Դա արիւնով լի մի առողջ պատանի էր, համարեա իմ հասակակից: Կողքը խթելով զարթեցնել չկարողացայ նրան, ստիպած եղայ բռնել երկու ձեռքից եւ մի քանի անգամ սաստիկ ցնցել: Քնաթաթախ, շփոթած, վեր թռաւ նա, եւ, տեսնելով իր սենեակում մի անծանօթ մարդ, կարծեց թէ նրան սպանելու կամ կողոպտելու համար եմ եկել: Նա իսկոյն